ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին

«30» հոկտեմբերի 2023թ. թիվ 17

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի և 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը և «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2023թ. հոկտեմբերի 13-ի թիվ 5 արձանագրային որոշման 1-ին կետը՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներ Վանուշ Մարգարյան Ա/Ձ-ին, ՊՐԵՄԻՈՒՄ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
Վանուշ Մարգարյան Ա/Ձ	54640201	Արագածոտնի մարզ գ. Գեղաձոր 2-դ փողոց տուն 3	Վանուշ Մարգարյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, մասնավորապես՝ Վանուշ Մարգարյան Ա/Ձ-ն չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունները:	-	-	«30» հոկտեմբերի 2023թ. թիվ 17 որոշում «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07»

ՊՐԵՄԻՈՒՄ ԳՐՈՒՊ ՍՊԸ	08427014	ք. Գավառ	ՊՐԵՄԻՈՒՄ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, մասնավորապես՝ ՊՐԵՄԻՈՒՄ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունները:	-	-	«30» հոկտեմբերի 2023թ. թիվ 17 որոշում «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07»

Սույն որոշման հիմքում առկա («ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07» ծածկագրով գնման ընթացակարգին առնչվող) բոլոր փաստաթղթերը հրապարակված են www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում:

3. Պատասխանատու ստորաբաժանմանը՝ ապահովել սույն որոշման տրամադրումը ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ կայացման հաջորդող օրը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Ն. ԳԱԼՍՏՅԱՆ**